



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

23 հունիսի, 2014թ.

ք. Երևան

«Հակակոռուպցիոն ուսուցում» Երևանի ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար

2014 թվականի հունիսի 21-ից 23-ը Երևանում տեղի ունեցավ եռօրյա հակակոռուպցիոն ուսուցում Երևանի ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար:

«Դուք գիտեք, թե որքան ցածր է բնակչության իրավագիտակցության մակարդակը, կարելի է ասել, որ բնակչությունը հակված է կոռուպցիայի, որպեսզի կարողանա իր հարցերը «հեշտ» ու «կարճ» ժամկետներում լուծել», - նշեց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Կարեն Զարոյանը:

Ո՞րն է ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների դերը կոռուպցիայի դեմ պայքարի գործում, որո՞նք են տեղեկատվություն ստանալու մեխանիզմներն ուղղությունները, ինչպե՞ս իրակայացնել լրագրողական հետաքննություններ: Այս և այլ հարցերը ուսուցման եռօրյա ծրագրի օրակարգում են եղել: Միջոցառմանը մասնակցեցին Երևանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և ՁԼՄ-ները:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 Եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրագել է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.

Ծրագրի հանրային կայքերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00: հեռ. 540199; ֆաքս 580299; URL <http://www.ayla.am>: Կատարող՝ Նարինե Կարապետյան
Էլ.փոստ՝ pr@ayla.am



Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010
Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճե: +37410 58 02 99

Ինֆորացիայի ազատության կենտրոն
Հասցե՝ Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010
Հեռախոս: +37410 56 03 60
Հեռապատճե: +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից
Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճե +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: